

կատարեցի: Հնութիւն կամ ուրիշ բաներ չտեսայ, բացի քանի մը մարմարեայ ագնիւ կտորներէ, որոնք մզկիթի մը շինութեան համար գործածուած էին, եւ քանի մը լաւ կերպով յղկուած սիւններ... Հայու մը տան պատին մէջ տեսայ աղուցուած յունարէն արձանազրութիւն մը»¹⁹):

«Քաղաքը բազմամարդ է՝ ունի թուրք, յոյն, հայ եւ հրեայ բնակչութիւն: Առաջինները ունին 20 մզկիթ, որոնցմէ ոմանք բաւական աղուոր են: Յոյները եւ հայերը ունին քանի մը եկեղեցիներ, որոնք աննշան են»²⁰):

Իսկ «բազմաբնակիչ Պուրսայի բնակչութեան մէկ մասը թուրքեր են, ուրիշ մաս մը՝ յոյներ եւ հայեր, որոնց առաջինները ամենաբազմաթիւն են»²¹):

Դարձեալ խօսելով Կ. Պոլսոյ հայոց պատրիարքական անցուղարձերու մասին, կը գրէ՝

«Պատրիարք Սուպհի անձամբ Ադրիանապոլիս դնաց՝ վերահաստատելու համար այն երեք քահանաները, որոնք իրենց եկեղեցիէն վտարուած էին տեղւոյն եպիսկոպոս Եփրեմէն: Ասոր հետ եւ քարոզիչներու մեծ յառաջդիմութիւնը հայերը հաւատադարձ ընելու մէջ զայրացուց հակակաթողիկները, որոնք նախանձոտ աչքերով կը նայէին տեսնելով Յիսուսեաններուն հայ եկեղեցիներու մէջ քարոզելը պատրիարքին պաշտպանութեան տակ: Քանի մը վարդապետներ ամբաստանեցին անոնց հետ յարաբերութիւն մշակելուն համար, նաեւ անոնց հետ միանալով հայերը Պապին հպատակեցնելու համար, լաւ վճարուած ըլլալով: Որով՝ քարոզիչները քաջուեցան (հայոց) եկեղեցիներուն մէջ քարոզելէ, բայց շարունակեցին հայոց տուները յաճախել եւ, ցանկալով իրենց կողմը շահիլ Դրան մօտ եղող քրիստոնեայ իշխան-

ները, անոնց ներկայացուցին շրջաբերական մը: Յայտնի է, որ անցեալ երեք տարուան մէջ այս հայերը (քարոզիչները) մեծ թիւ մը հաւատադարձ ըրին: Անոնք ոչ մէկ բանի կարիք ունէին, բացի Դոնէն թոյլատրուել որ ընդհանուր հաւատադարձութիւն մը ընեն: Եւ այդ եռանդուն ձեռնարկին ամենանպաստաւոր վիճակն էր երկար ատեն աղքատագոյն հայոց բողոքը հարկերուն դէմ, զոր ըստիպուած էին վճարել եկեղեցւոյն իրենց քահանաներուն պահպանման համար, որոնք հաստատուն եկամուտ մը չունէին: Նաեւ հարուստները շատ դժգոհ էին յաճախ եղած պահքերուն դէմ մսի, իւղի, պանիրի եւն., որոնք կը յոգնեցնէին զիրենք: Ուրիշ վէճ գոյութիւն չունէր՝ այս (հայ) ժողովուրդը իր եկեղեցիէն բաժնելու համար: Կաթողիկները աղքատները ձրի կ'ընդունէին եւ հարուստներուն թոյլ կուտային վայելել կեանքը՝ պահանջելով միայն քառասնորեայ պահք մը, թեթեւցուած կաթի, իւղի, ձուկի, պանիրի եւն. գործածութեամբ, որոնք արդէլուած էին հայ քահանաներէն տարուան գրեթէ երեք չորրորդին համար: Մանաւանդ անոնք հրապարակեցին մարգարէութիւն մը հին հայ պատրիարքի մը՝ Ներսէսին վերագրուած, որով կը գուշակուէր թէ պատերազմասէր հռովմէական ժողովուրդ մը օր մը պիտի վտարէ մահմետական տիրապետները եւ վերահաստատէ հայերը իրենց նախկին ուժին եւ ազատութեան մէջ: Այս մարգարէութիւնը քիչ ազդեցութիւն չունեցաւ իրենց (հայոց) մտքին վրայ եւ բաւական օգնեց քարոզիչներու հոգեկան յաղթանակներուն»:

«Իրերու կացութիւնը այս վիճակին մէջ ըլլալով՝ հակակաթողիկ վարդապետներէն ոմանք, երբ տեսան, որ այս հայերը այդ միջոցներով ամէն օր աւելի մեծ թիւով իրենց հողեկան հօտէն կը հեռանան եւ այդպէսով իրենց եկամուտները նկատելի կերպով կը նուազին նորադարձներուն յաճախակի լքմանց

19) Անդ՝ էջ 213-214:

20) Անդ՝ էջ 214:

21) Անդ՝ էջ 216: